Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը դիտվում է որպես գերակայություն: Վերջին տարիներին փոխվել է գյուղատնտեսության հանդեպ վերաբերմունքն ու ակտիվացել է պետական քաղաքականությունը: Այս համատեքստում ակտիվորեն քարոզվել է գարնանացան մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումն ու, առավելապես, մշակվող կուլտուրաների կազմի համալրումն ավանդական ու ոչ ավանդական մշակաբույսերով: Հատկապես կարևորվել է ցանքաշրջանառության կիրառումը՝ որպես ցանքատարածքների կառուցվածքի բարելավման կարևորագույն նախադրյալ, ինչպես նաև, ոռոգման արդի համակարգերի ներդրումն ու դրանց կիրառմամբ արդյունաբերական նշանակության այգեգործության զարգացումը: Մշակվել և կյանքի են կոչվել այս ոլորտների զարգացմանը միտված մի շարք ծրագրեր:

2017 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը կազմել է 68930.0 հեկտար, ընդ որում, աշնանացան մշակաբույսերի տարածքներ՝ 54154.0 հեկտար, գարնանացան՝ 14776.0 հեկտար: Նախորդ տարվա համեմատ՝ ընդհանուր ցանքատարածքների մակերեսներն ավելացել են 2870.0 հեկտարով կամ 4.2 տոկոսով: Աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքները նվազել են 1846.0 հեկտարով կամ 3.3 տոկոսով, գարնանացան մշակաբույսերի ցանքատարածքներն ավելացել են 4716.0 հեկտար կամ 46.9 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2016 թ.	**Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ**	**2017 թ.**	**Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ**
Ընդամենը	***66060.0***	***100.0***	***68930.0***	***100.0***
Աշնանացան մշակաբույսեր	56000.0	85.0	54154.0	78.6
Գարնանացան մշակաբույսեր	10060.0	15.0	14776.0	21.4

Հաշվետու տարում ցանքատարածքների գերակշռող մասը՝ 61580,1 հեկտարը (89.3 տոկոս), կազմել են հացահատիկային մշակաբույսերի տարածքները: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկայինների ցանքատարածքներն ավելացել են 1874,5 հեկտարով կամ 3,1 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2016թ.	2017թ.	Աճի տեմպը, %
Հացահատիկային մշակաբույսեր	**59705.6**	**61580.1**	**103,1**
ցորեն	33581.6	29619.7	88,2
գարի	23026.1	27095.6	117,7
հաճար	1817.7	1962.6	108,0
եգիպտացորեն	1280,2	2902.2	226,7

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով 2017 թվականին ևս ձեռնարկվել են համապատասխան հրդեհականխարգելիչ միջոցներ, որոնց արդյունքում բերքահավաքի ընթացքում հաջողվել է զերծ մնալ մասայական հրդեհներից:

Հացահատիկայինների բերքահավաքի աշխատանքներում հաշվետու տարում ներգրավվել է 250 միավոր կոմբայն, այդ թվում 72 միավորը՝ ՀՀ-ից:

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 61580.1 հեկտար տարածքներից (ներառյալ եգիպտացորեն) 2017 թվականին փաստացի հնձվել է 59135.5 հեկտար կամ ցանված տարածքների 96.0 տոկոսը, կալսվել է 154884.5 տոննա հացահատիկ, միջին բերքատվությունը կազմել է 26.2 գ/հա: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկայինների համախառն բերքն ավելացել է 6872.6 տոննայով կամ 4.6 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Հ/հ	*Շրջանը*	*Ցանված տարածքը (հա)*			*Հավաքված է փաստացի (հա)*			*Կալսված է (տ)*			*Բերքատվությունը (գ/հա)*		
		2016թ.	*2017թ.*	*2017թ. 2016թ.նկատմամբ %-ով*	*2016թ.*	*2017թ.*	*2017թ. 2016թ.նկատմամբ %-ով*	*2016թ.*	*2017թ.*	*2017թ. 2016թ.նկատմամբ %-ով*	*2016թ.*	*2017թ.*	*2017թ. 2016թ.նկատմամբ %-ով*
1	**Ասկերան**	11994,4	12334,4	102,8	11810,4	11538,5	97,7	29458,5	30674,0	104,1	24,9	26,6	106,6
2	**Հադրութ**	10540,7	10138,5	96,2	9979,5	9767,1	97,9	25714,7	23855,0	92,8	25,8	24,4	94,8
3	**Մարտակերտ**	5643,3	5373,5	95,2	5335,8	5249,9	98,4	9875	14751,9	149,4	18,5	28,1	151,8
4	**Մարտունի**	13382,6	12969,4	96,9	13268,5	12181,4	91,8	38777,7	28862,5	74,4	29,2	23,7	81,1
5	**Շահումյան**	133,2	124,1	93,2	133.0	124,1	93,3	365,2	239,8	65,7	27,5	19,3	70,4
6	**Շուշի**	200,4	117,0	58,4	200,4	117,0	58,4	333,5	223,3	67,0	16,6	19,1	114,7
7	**Քաշաթաղ**	17811	20523,2	115,2	17426.0	20157,5	115,7	43487,3	56278,0	129,4	25,0	27,9	111,9
ԸՆԴԱՄԵՆԸ		***59705,6***	***61580,1***	***103,1***	***58154.0***	***59135,5***	***101,7***	***148011,9***	***154884,5***	***104,6***	***25,5***	***26,2***	**102,9**

Ընդհանուր առմամբ, հնձվել է 28590,1 հա ցորեն, 26308,0 հա գարի, 1949,1 հա հաճար և 2288,3 հա եգիպտացորեն (հատիկի համար): Կալսվել է 79213,3 տոննա ցորեն, 64214,8 տոննա գարի, 3355,7 տոննա հաճար և 8100,7 տոննա եգիպտացորեն, միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 27.7, 24,4, 17,2 և 35,4 g/ha: Բացի այդ, եգիպտացորենի տակ ցանված տարածքներից 396,2 հեկտար հնձվել է սիլոսի համար, հավաքվել է 8465,8 տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 213,7 g/ha:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

Հ/հ	Շրջաններ	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
		Հավաք-ված է փաստա-ցի (հա)	Կալս-ված է (տ)	Բերքա-տվութ-յունը (g/հա)	Հավաք-ված է փաստա-ցի (հա)	Կալս-ված է (տ)	Բերքա-տվութ-յունը (g/հա)	Հավաք-ված է փաստա-ցի (հա)	Կալս-ված է (տ)	Բերքա-տվութ-յունը (g/հա)	Հավաք-ված է փաստա-ցի (հա)	Կալս-ված է (տ)	Բերքա-տվութ-յունը (g/հա)
1	Ասկերան	7937,5	21762,5	27,4	2114,0	4855,0	23,0	616,5	911,5	14,8	870,5	3145,0	36,1
2	Հադրութ	2727,1	6964,5	25,5	6885,0	16452,0	23,9	10,0	18,0	18,0	145,0	420,5	29,0
3	Մարտակերտ	3245,4	8770,0	27,0	988,0	2282,0	23,1	200,0	331,7	16,6	816,5	3368,2	41,3
4	Մարտունի	7893,1	21055,5	26,7	3922,0	7090,0	18,1	31,0	57	18,4	335,3	660,0	19,7
5	Շահումյան	101,0	189,8	18,8	6,0	11,0	18,3	4,6	1,5	3,3	12,5	37,5	30,0
6	Շուշի	67,0	156,0	23,3	17,0	12,8	7,5	30,0	46,0	15,3	3,0	8,5	28,3
7	Քաշաթաղ	6619,0	20315,0	30,7	12376,0	33512,0	27,1	1057,0	1990,0	18,8	105,5	461,0	43,7
ԸՆԴԱՄԵՆԸ		***28590,1***	***79213,3***	***27,7***	***26308,0***	***64214,8***	***24,4***	***1949,1***	***3355,7***	***17,2***	***2288,3***	***8100,7***	***35,4***

2017 թվականի բերքի տակ ցանված 2218,9 հեկտար հնդկացորենի ցանքատարածքներից հնձվել է 1623,9 հա, հավաքվել է 1270,1 տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 7,8 g/ha:

ՀՆԴԿԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹ-ՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	**Բերքահավաքի ենթակա տարածքը (հա)**	**Փաստացի հավաքված ցանքատարածութ-յունը(հա)**	**Փաստացի հավաքված բերքը (տ)**	**Միջին բերքատվութ-յունը (g/հա)**
Ասկերան	869,0	747,7	630,0	8,4
Հադրութ	158,0	96,0	57,6	6,0
Մարտակերտ	381,7	172,0	196,5	11,4
Մարտունի	759,2	557,2	359,4	6,5
Շուշի	47,0	47,0	23,6	5,0
Քաշաթաղ	4,0	4,0	3,0	7,5
ԸՆԴԱՄԵՆԸ ԼՂՀ	***2218,9***	***1623,9***	***1270,1***	***7,8***

Հաշվետու տարում ցանված 2176,0 հեկտար արևածաղկի ցանքատարածքներից հնձվել է 1981,6 հա բերք՝ 2258,4 տոննա հատիկ և 1986,2 տոննա՝ սիլոսի համար: Միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 12,1 և 171,7 g/հա:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)		Հավաքվել է (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
		հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար
Ասկերան	976,9	921,3	40,0	1283,0	550,0	13,9	137,5
Հադրութ	380,0	317,0		206,0		6,5	
Մարտակերտ	403,4	390,4		655,2		16,8	
Մարտունի	301,8	203,2	66,0	97,2	1281,2	4,8	194,1
Շուշի	34,0	34,0		17,0		5,0	
Քաշաթաղ	79,9		9,7		155,0		159,8
Ընդամենը	***2176,0***	***1865,9***	***115,7***	***2258,4***	***1986,2***	***12,1***	***171,7***

Հանրապետությունում առկա 1890,8 հա խաղողայգիներից բերքահավաք է իրականացվել 1227,6 հեկտարի վրա, համախառն բերքը կազմել է 7028,5 տոննա, միջին բերքատվությունը՝ 57,3 g/հա:

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ (ՊՏՂԱՏՈՒ ՀԱՍԱԿՈՒՄ), ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Հավաքվել է (հա)		Համախառն բերքը (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.
Ասկերան	150.1	145,1	379.3	486,3	25.3	33.5
Հադրութ	80.0	190,0	510.0	665,0	63.8	35.0
Մարտակերտ	68.1	29,8	398.6	238,5	58.5	80.0
Մարտունի	1226.6	757,0	1575.3	5072,0	12.8	67.0
Շահումյան	4.0	4,0	14.0	24,0	35.0	60.0
Շուշի	1.5		0.2		1.3	
Քաշաթաղ	96.0	101,7	84.2	542,7	8.8	53.4
Ընդամենը	***1626.3***	***1227,6***	***2961.6***	***7028,5***	***18.2***	***57.3***

Վերջին տարիներին լուրջ ներդրումներ են իրականացվում ծխախոտի մշակության զարգացման բնագավառում: 2017 թվականին «Մասիս տոբակո» ընկերությունը շարունակել է աջակցել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների հողօգտագործողներին՝ ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան ծխախոտի մշակության աշխատանքները կազմակերպելու հարցում: Հաշվետու տարում հանրապետությունում 164,2 հա-ի վրա կատարվել է ծխախոտի մշակություն, համախառն բերքը կազմել է 2205.0 տոննա, ինչը նախորդ տարվա

համեմատ ավել է 434.6 տոննայով կամ 19.7 տոկոսով, մեկ հեկտարի միջին բերքատվությունը աճել է 12.1 ցետներով կամ 9.0 տոկոսով:

ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

	Ասկերան		Մարտակերտ		Մարտունի		***Ընդամենը***	
	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	***2016թ.***	***2017թ.***
Ցանվել է (հա)	48,5	43.0	28,0	8.0	86,4	113.2	***162,9***	***164.2***
Հավաքվել է (հա)	48,5	43.0	10,0	8.0	86,4	113.2	***144,9***	***164.2***
Համախառն բերքը (տ)	428.5	503.0	37.2	91.8	1304.7	1610.2	***1770.4***	***2205.0***
Բերքատվությունը (գ/հա)	88.3	117.0	37.2	114.8	151.0	142.2	***122.2***	***134.3***

Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի պահպանման նպատակով հաշվետու ժամանակահատվածում «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից շուրջ 73.0 հազար հեկտարի վրա կատարվել են դաշտային հետազոտություններ և ցանքսերի բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ: Թունանյութերի լաբորատորիայում իրականացվել է 165 նմուշի հետազոտություն, իսկ ագրոքիմիական լաբորատորիայում՝ հողերի 858/4290 և հանքային պարարտանյութերի 10/23 նմուշ/անալիզներ:

«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից աշնանացան ցորենի առաջնային սերմնաբուծության նպատակով 2017 թվականի բերքի տակ ցանվել էր 272,0 հեկտար ցորեն: Ընդհանուր առմամբ, հավաքվել է 743.5 տոննա բերք՝ ֆիզիկական քաշով, որի վերամշակումից ստացվել է 470.0 տոննա աշնանացան ցորենի «Կրասնոդարսկայա 99» սորտի առաջին վերարտադրության սերմացու, 97.0 տոննա բերք իրացվել է պարենային օգտագործման նպատակով: Ընկերության կողմից իրականացվել է 400 նմուշ գյուղատնտեսական սերմերի լաբորատոր փորձաքննություն և 36 միավոր գյուղատնտեսական մշակաբույսերի սորտափորձարկում:

Շարունակվել են պետական աջակցության ծրագրերի շրջանակներում սերմերի, պարարտանյութերի, թունանյութերի՝ հողօգտագործողներին մատչելի պայմաններով տրամադրման աշխատանքները:

2017 թվականին գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքը կազմել է 33,5 մլրդ դրամ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 76,2 մլրդ դրամ, այդ թվում բուսաբուծություն՝ 38,4 մլրդ դրամ, անասնաբուծություն՝ 37,8 մլրդ դրամ: Բուսաբուծության և անասնաբուծության ոլորտների տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ կազմել է, համապատասխանաբար, 50,4 և 49,6 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

	2007 թ. /մլրդ դրամ/	տեսակարար կշիռը	2008 թ. /մլրդ դրամ/	տեսակարար կշիռը	2016 թ. /մլրդ դրամ/	տեսակարար կշիռը	2017 թ. /մլրդ դրամ/	տեսակարար կշիռը	Աճի տեմպը /%/ 2016 թ. 2017 թ. նկատմամբ
Ընդամենը, այդ թվում	23,8	100,0	31,2	100,0	68,5	100,0	76,2	100,0	11.2
բուսաբուծություն	14,7	61,8	21,2	68,0	36,0	52,6	38,4	50,4	6,7
անասնաբուծություն	9,1	38,2	10,0	32,0	32,5	47,4	37,8	49,6	16,3

Ինչպես նախորդ տարիներին, աշխատանքներ են տարվել գյուղատնտեսության ճյուղերի հավասարաչափ զարգացումն ապահովելու ուղղությամբ:

2017 թվականին նախորդ տարվա համեմատ ավելացել են մսի, մեղրի և նվազել կաթի, բրդի ու ձվի արտադրության ծավալները, համապատասխանաբար՝ 19.3, 5.3, 11.2, 14.1 և 1.5 տոկոսով:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ և ՀՈՒՄՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2016թ.	***2017թ.***	***Աճի տեմպը, %***
Միս (կենդանի քաշով), *տոննա*	12928.0	15428.3	119.3
Կաթ, *տոննա*	48959.8	43457.8	88.8
Ձու, *հազ. հատ*	40658.4	40033.0	98.5
Բուրդ, տոննա	306.2	262.9	85.9
Մեղր, տոննա	343.0	361.1	105.3

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 43112 գլուխ, այդ թվում կովեր՝ 18528 գլուխ, խոզեր՝ 20188 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 57860 գլուխ, թռչուններ՝ 380140 թև: Աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է, համապատասխանաբար, 92.2 , 97.5 , 103.5 , 60.8 և 111.5 տոկոս:

ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԱՃԻ ՏԵՄՊԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Անասնատեսակ	**խ.ե.ա**	**կով**	**խոզեր**	**մ.ե.ա**	**թռչուն**
01.01.2017	46743	18999	19499	95139	341044
01.01.2018	43112	18528	20188	57860	380140
աճի տեմպը %	92.2	97.5	103.5	60.8	111.5
աճի տեմպը +-	-3631	-471	689	-37279	39096

Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազել է 3631-ով, այդ թվում՝ կովերի գլխաքանակը նվազել է 471-ով, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 37279-ով: Խոզերի գլխաքանակը աճել է 689-ով, թռչունների գլխաքանակը՝ 39096 թևով:

Նշված տարում բարձրացել է կովերի կաթնային մթերատվությունը. աճի տեմպը կազմել է 101.9 տոկոս, որը պայմանավորված է տեղական նախրի մթերատվության բարձրացման ուղղությամբ իրականացվող ծրագրերի՝ տոհմային ցուլերի և տոհմային ցածր մթերատու կովերի տրամադրմամբ և արհեստական սերմնավորման իրականացմամբ: Բարձրացել է հավերի միջին ձվատվությունը՝ կազմելով 100.5 տոկոս, մեղվաընտանիքի միջին մեղվատվությունը՝ 109.4 տոկոս, ոչխարների բրդատվությունը՝ կազմելով 110.7 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2016-2017 թթ.

	2016թ.	*2017թ.*	*Աճի տեմպը, %*
1 կովի միջին կաթնատվությունը, կգ	2350	2395	101,9
1 ածան հավի միջին ձվատվությունը՝ հատ	216	217	100,5
1 մեղվաընտանիքի միջին մեղվատվությունը	12,7	13,9	109,4
1 ոչխարի միջին բրդատվությունը՝ կգ	2,8	3.1	110.7

Հաշվետու տարում «Տոհմային կայան» ՓԲԸ-ում արտադրվել է շուրջ 689,2 տոննա կաթ, որից իրացվել է շուրջ 629,9 տոննան:

Տեղական անասնագլխաքանակի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման նպատակով 2011 թվականից շարունակում է գործել տոհմային կենդանիների տրամադրման ծրագիրը, որի շրջանակում 2017 թվականին տոհմային տնտեսություններից արտոնյալ պայմաններով հանրապետության ֆերմերներին է տրամադրվել 576 տոհմային կենդանի, այդ թվում 50 գլուխ տոհմային ցուլ և 156 գլուխ տոհմային ցածր մթերատու կով, 208 գլուխ տոհմային հորթ, 150 գլուխ տոհմային մատղաշներ, 12 գլուխ տոհմային երինջներ:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծրագրի շրջանակում իրականացվել է 215 գլխի արհեստական սերմնավորում:

Վերը նշված երկու ծրագրերի իրականացման արդյունքում ծնված խառնածինները, աչքի ընկնելով բարձր մթերատու հատկություններով, դրական ազդեցություն ունեցան՝ ինչպես կաթնային, այնպես էլ մսային մթերատվության առումով:

2017 թվականին իրականացված անասնաբուժասանիտարական միջոցառումների շնորհիվ հաջողվել է հանրապետությունում պահպանել անասնահամաճարակային կայուն իրավիճակ, բացառությամբ՝ բրուցելյոզ, խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունների առանձին դեպքերի: Հիվանդության տարածման, կանխման և

հիվանդ անասունների բուժման նպատակով օպերատիվ կերպով իրականացվել են համապատասխան բուժկանխարգելիչ միջոցառումներ:

2017 թվականին, ընդհանուր հաշվով, անասնաբույժների կողմից իրականացվող հակահամաճարակային միջոցառումների շրջանակում կատարվել է շուրջ 1.0 մլն կանխարգելիչ սրսկում, խոշոր ու մանր եղջերավոր անասունների բրուցելյոզ հիվանդության նկատմամբ՝ շուրջ 85398 գլխի արյան նմուշի շիճուկաբանական հետազոտություն:

Հաշվետու տարում վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 1928.8 տոննա պտուղ-բանջարեղեն, ինչը 2015 թվականի համեմատ աճել է 41.4 տոկոսով: Կաթ վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 2019.4 տոննա կաթ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 4.8 տոկոսով:

Գյուղտեխնիկայի բնագավառում պետական տեսչական աշխատանքները շարունակել են ընթանալ բնականոն հունով: Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի թարմացան ու վերազինման նպատակով 2017 թվականին լիզինգային եղանակով հանրապետության տարբեր շրջանների տնտեսվարող սուբյեկտներին է տրամադրվել 12 միավոր Դոյչ-Ֆահր AGROTRON 180 մակնիշի անիվավոր տրակտոր և այլ սարքավորումներ:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի քանակը կազմել է 1573 միավոր:

№	Շրջան	Տեխնիկայի տեսակը									
		Հաց. կոմբայն	Սարքին	Անիվավոր տրակտոր	Սարքին	Թրթռուղավոր տրակտոր	Սարքին	Կցասայլ	Սարքին	Խոտհնձիչ	Սարքին
1	Ասկերան	**66**	54	**194**	148	**108**	87	**39**	31	**2**	2
2	Հադրութ	**51**	50	**92**	71	**55**	37	**30**	28	**2**	2
3	Մարտակերտ	**38**	32	**111**	107	**68**	47	**16**	15	**0**	
4	Մարտունի	**98**	84	**198**	157	**176**	121	**29**	24	**12**	9
5	Շուշի	**3**	2	**10**	8	**5**	3	**-**		**-**	
6	Քաշաթաղ	**20**	18	**71**	56	**6**	4	**7**	6	**-**	
7	Շահումյան	**0**	**-**	**5**	4	**2**	1	-		-	
8	Ստեփանակերտ	**28**	**22**	**86**	68	**64**	50	**5**	3	2	
Ընդամենը		**304**	**262**	**767**	**619**	**484**	**350**	**126**	**107**	**18**	**13**
Որից Գերմանական		**46**		**69**							
Սարքինություն %		**86**		**81**		**72**		**85**		**72**	

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագրի» շրջանակում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման համար անտոկոս փոխառություն տրամադրելու նպատակով ջրօգտագործողներից ընդունվել են թվով 57 հայտեր, բավարարվել՝ 26-ը:

Նույն ծրագրով կաթիլային ոռոգման համակարգ է կառուցվել շուրջ 343,0 հա հողատարածքի վրա, որից՝ 86 հա՝ խաղողի այգի, 18 հա՝ պտղատու այգի, 193 հա՝ նռան այգի, 2 հա՝ ընկուզենու այգի և 44 հա ծխախոտի մշակության համար նախատեսված տարածք:

Մեխանիկական եղանակով 2017 թականի ընթացքում ոռոգվել է 2712,8 հա հողատարածք, որից Ասկերանի շրջանում՝ 1102,8 հա, Մարտունու շրջանում՝ 1116,3 հա, Մարտակերտի շրջանում՝ 385,0 հա և Հադրութի շրջանում՝ 108,5 հա:

Հանրապետությունում շարունակվել են որակյալ և անվտանգ սննդամթերքով բնակչությանն ապահովվելու ուղղությամբ տարվող աշխատանքները: 2017 թվականին ԱՀ ԳՆ պետական կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվել են 407 դիտարկումներ հանրապետության 332 տնտեսավարող սուբյեկտներում: Իրացման կետերում կատարված դիտարկումների արդյունքում հայտնաբերվել և ոչնչացվել են ժամկետանց կաթնամթերք՝ 12.954 կգ, պահածոյացված սննդամթերք՝ 31.925կգ, հրուշակեղեն և հումք՝ 0.5 կգ, մանկական սնունդ՝ 1.1 կգ, ոչ ալկոհոլային խմիչք՝ 74.48լ, բուսական յուղ՝ 6 կգ, սփրեդ՝ 15.75 կգ, քաղցրավենիք՝ 9.176 կգ, մսամթերք՝ 58.565 կգ, մայոնեզ՝ 14.479 կգ, կետչուպ՝ 1.71 կգ, խտացրած կաթ՝ 6.310 կգ, շերտավոր խմոր՝ 0.88 կգ, այլ սննդամթերք՝ 5.215 կգ: Մայրաքաղաքի տարբեր մասերում հայտնաբերվել է հակասանիտարական պայմաններում և առանց անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկելու մսի վաճառքի 10 դեպք, ինչի հետևանքով մսի հետագա իրացումն արգելվել և շուկայից հանվել է:

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում Գյուղատնտեսության աշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպված բերքի տոնին հաշվետու տարում իրենց մասնակցությունն են բերել Արցախի շուրջ 200 համայնքների ներկայացուցիչներ: Տեղական արտադրության բերք ու բարիքի տոնավաճառին կատարվել է 873000,0 հազ. դրամի առևտուր՝ նախորդ տարվա 597225,0 հազ. դրամի փոխարեն:

ԱՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան ստորաբաժանումը ապահովել է գերատեսչության կողմից տարվող քաղաքականության լուսաբանումը՝

նախարարության պաշտոնական կայքէջի ու տեղական և հայաստանյան առաջատար զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ագրարային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի հետևողական կատարելագործումը: Մասնավորապես, մշակվել և ընդունվել են շուրջ երեք տասնյակ իրավական ակտեր, այդ թվում՝ 4 հատ գերատեսչական նորմատիվ ակտ, 24 հատ ԼՂՀ կառավարության որոշման և 2 հատ ԼՂՀ վարչապետի որոշման նախագծեր:

Հաշվետու տարում նախարարություն մուտք գործած թվով 3100 տարբեր բնույթի գրությունները սահմանված կարգով ընթացքավորվել են:

Գյուղատնտեսության զարգացման համատեքստում իրականացվող քաղաքականությունը 2018 թվականին ոլորտային ծրագրերի մշակմանը և իրագործմանը զուգընթաց, միտված է լինելու նպաստել այնպիսի հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ինչպիսիք են գյուղական բնակչության կենսամակարդակի աճը, գյուղի՝ որպես բնակավայրի գրավչության բարձրացումը, արտագնացության տեմպերի նվազումը և աշխատանքների ու ծրագրերի արդյունավետության բարձրացումը: